

Կ-362³-14.10.2013-ՏՀ-010/2

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Օ Ր Ե Ն Ք Ը

«ՊԵՏԱԿԱՆ ՏՈՒՐՔԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության 1997 թվականի դեկտեմբերի 27-ի ՀՕ-186 օրենքի (այսուհետ՝ Օրենք) 19-րդ հոդվածի

1. 15.5-րդ ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«15.5. Մարդատար-տաքսի ավտոմոբիլներով ուղևորափոխադրումների կազմակերպման համար՝

- անհատ ձեռնարկատերերի և կազմակերպությունների կողմից մարդատար-տաքսի մեկից չորս ավտոմոբիլներով ուղևորափոխադրումների կազմակերպման համար՝ տարեկան բազային տուրքի 100-ապատիկի չափով

- անհատ ձեռնարկատերերի և կազմակերպությունների կողմից մարդատար-տաքսի չորսից ավելի ավտոմոբիլներով ուղևորափոխադրումների կազմակերպման համար՝ տարեկան բազային տուրքի 200-ապատիկի չափով:»

2. լրացնել նոր 15.6-րդ ենթակետով՝ հետևյալ բովանդակությամբ.

«15.6. ֆիզիկական անձանց կողմից մարդատար-տաքսի մեկ ավտոմոբիլով ուղևորափոխադրումների կազմակերպման համար Երևան քաղաքում ամսական՝ բազային տուրքի 12-ապատիկի չափով կամ եռամսյակային՝ բազային տուրքի 34-ապատիկի չափով կամ տարեկան՝ բազային տուրքի 120-ապատիկի չափով, այլ քաղաքներում ամսական՝ բազային տուրքի 8-ապատիկի չափով կամ եռամսյակային՝ բազային տուրքի 23-ապատիկի չափով կամ տարեկան՝ բազային տուրքի 80-ապատիկի չափով, այլ վայրերում ամսական՝ բազային տուրքի 5-ապատիկի չափով կամ եռամսյակային՝ բազային տուրքի 13.5-ապատիկի չափով կամ տարեկան՝ բազային տուրքի 45-ապատիկի չափով, սահմանամերձ գյուղերում ամսական՝ բազային տուրքի 4-ապատիկի չափով կամ եռամսյակային՝ բազային տուրքի 9-ապատիկի չափով կամ տարեկան՝ բազային տուրքի 30-ապատիկի չափով: Ընդ որում պետական տուրքը գանձվում է ըստ հայտատու ֆիզիկական անձի հաշվառման վայրի: Սույն տուրքի մասով եռամսյակ նշանակում է իրար հաջորդող յուրաքանչյուր երեք ամիս»:

Հոդված 2. Օրենքը լրացնել նոր 6.2-րդ հոդվածով հետևյալ բովանդակությամբ.

«6.2. Տարեկան պետական տուրքի վերաբերյալ սահմանված դրույթների կիրառվումը ամսական և եռամսյակային պետական տուրքերի նկատմամբ

Սույն օրենքով տարեկան պետական տուրքի վերաբերյալ սահմանված դրույթները կիրառվում են նաև ամսական և եռամսյակային պետական տուրքերի նկատմամբ, եթե այլ բան նախատեսված չէ սույն օրենքով կամ չի հակասում ամսական կամ եռամսյակային պետական տուրքերի վճարման հարաբերությունների էությանը:»:

Հոդված 3. Օրենքի 32-րդ հոդվածը լրացնել նոր 2-րդ պարբերությամբ հետևյալ բովանդակությամբ.

«Մարդատար-տաքսի մեկից չորս ավտոմոբիլներով ուղևորափոխադրումների կազմակերպման լիցենզիա ունեցող անհատ ձեռնարկատերերը և կազմակերպությունները, մարդատար-տաքսի ավտոմոբիլների քանակը օրենսդրությամբ սահմանված կարգով չորսից ավելացնելու դեպքում, պարտավոր են վճարել պետական տուրք բազային տուրքի 100-ապատիկի չափով: Պետական տուրքը պետք է վճարվի մինչև ավտոմոբիլների քանակը օրենսդրությամբ սահմանված կարգով չորսից ավել դառնալը: Սույն պարբերությամբ սահմանված դեպքում անկախ պետական տուրքի վճարման ամսաթվից, լիցենզիայի համար տարեկան հերթական պետական տուրքը վճարվում է սույն օրենքի 34-րդ հոդվածով սահմանված ժամկետում: Անհատ ձեռնարկատերերը և կազմակերպությունները մարդատար-տաքսի ավտոմոբիլների քանակը օրենսդրությամբ սահմանված կարգով չորսից ավել դառնալու դեպքում հերթական տարեկան պետական տուրքը վճարում են սույն օրենքի 19-րդ հոդվածի 15.5-րդ ենթակետի 2-րդ պարբերությամբ սահմանված դրույթաչափով:

Անհատ ձեռնարկատերերը և կազմակերպությունները մարդատար-տաքսի ավտոմոբիլների քանակը օրենսդրությամբ սահմանված կարգով չորս և պակաս դառնալու դեպքում տարեկան հերթական պետական տուրքը վճարում են սույն օրենքի 34-րդ հոդվածով սահմանված ժամկետում՝ սույն օրենքի 19-րդ հոդվածի 15.5-րդ ենթակետի 1-րդ պարբերությամբ սահմանված դրույթաչափով:

Հոդված 3. Օրենքի 34-րդ հոդվածը լրացնել նոր պարբերությամբ՝ հետևյալ բովանդակությամբ.

«Սույն օրենքի 19-րդ հոդվածի 15.6-րդ ենթակետով սահմանված ամսական կամ եռամսյակային հերթական պետական տուրքի վճարումը յուրաքանչյուր առաջիկա ամսվա կամ եռամսյակի համար կատարվում է համապատասխանաբար մինչև առաջիկա ամիսը կամ եռամսյակը սկսելը՝ լիազոր մարմնի կողմից համապատասխան լիցենզիայի վրա նշված լիցենզիաների տրման ամսաթվից ոչ ուշ:»:

Հոդված 4. Օրենքի 36.1-րդ հոդվածի 1-ին մասը շարադրել նոր խմբագրությամբ.

«1. Պետական տուրքի պարտավորությունների (տուրք, տույժ), բացառությամբ սույն օրենքի 19-րդ հոդվածի 15.6-րդ ենթակետով սահմանված պետական տուրքի պարտավորությունների, հաշվառման համար հարկային մարմնում բացվում են անձնական հաշվի քարտեր: Անձնական հաշվի քարտի ծևը և վարման կարգը սահմանում է վերադաս հարկային մարմինը: Սույն օրենքի 19-րդ հոդվածի 15.6-րդ ենթակետով սահմանված պետական տուրքի պարտավորությունների հաշվառումն իրականացնում է ՀՀ տրանսպորտի և կապի նախարարությունը:»:

Հոդված 5. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

«Ավտոմոբիլային տրանսպորտի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», «Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին», «Տրանսպորտի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին», «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», «Լիցենզավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն և լրացումներ կատարելու մասին», «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին», «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում լրացում կատարելու մասին», «Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին», «Եկամտային հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին»

Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի վերաբերյալ առաջարկությունների և առարկությունների

h/h	Առարկության, առաջարկություն հեղինակը, գրության ամսաթիվը, գրության համարը	Առարկության, առաջարկության բովանդակությունը	Եզրակացություն	Կատարված փոփոխությունը
1.	ՀՀ կառավարություն	«Ավտոմոբիլային տրանսպորտի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի՝ 1.5-րդ հոդվածում էթիկայի կանոնների սահմանման իրավասությունը վերապահել ՀՀ կառավարությանը: անհրաժեշտությունը կարող է իմաստ ունենալ, եթե նախատեսվեն համապատասխան իրավական հետևանքներ, հակառակ պարագայում դրանք պետք է դիտվեն որպես կամավոր կատարման համար նախատեսված կանոններ:	1.Ընդունվել է:	1.«Ավտոմոբիլային տրանսպորտի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի 5-րդ հոդվածը շարադրվել է հետևյալ խմբագրությամբ. «2.1.

		2. Առաջարկում ենք հստակեցնել նախագծի 2-րդ հոդվածում (փոփոխվող 17-րդ հոդված) նշված «և (կամ)» բառերը: Նույն հոդվածի 1-ին մասի վերջին նախադասությունը «իրականացնել» բառից հետո առաջարկում ենք լրացնել «անձամբ» բառով, քանի որ շարադրանքից հետևում է, որ ֆիզիկական անձը կարող է հանդես գալ որպես ուղևորափոխադրման կազմակերպիչ: 3. 2-րդ հոդվածի 2-րդ մասի «բ» ենթակետում նշված «շախմատածև դեղին գույնի տարբերանշան» արտահայտության մեջ «դեղին» բառից հետո լրացնել «սև» բառը: 4. Առաջարկում ենք նախագծի 3-րդ հոդվածի (փոփոխվող 18-րդ հոդված) 2-րդ մասը շարադրել նոր խմբագրությամբ, ըստ որի «փոխադարձ» համաձայնությունը կվերաբերի միայն անկանխիկ վճարմանը:	2. Ընդունվել է: 3. Ընդունվել է: 4. Ընդունվել է:	Կառավարությունը կարող է սահմանել ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տրանսպորտով փոխադրումներ իրականացնելու դեպքում ավտովարորդների էթիկայի կանոններ:»: 2. Կատարվել է համապատասխան փոփոխություն: 3. Կատարվել է համապատասխան փոփոխություն: 4. Կատարվել է համապատասխան փոփոխություն:
2.		«Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի 5-րդ հոդվածից հանել	Ընդունվել է	Կատարվել է համապատասխան փոփոխություն

		« հետևյալ բովանդակությամբ» բառերը:		
3.		«Քաղաքացիական օրենսգրքում փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի 1-ին հոդվածում «26-րդ հոդվածում» բառերն անհրաժեշտ է փոխարինել «26-րդ հոդվածի 2-րդ մասում» բառերով:	Ընդունվել է	Կատարվել համապատասխան փոփոխություն է
4.		Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի 1. 2-րդ հոդվածի 1-ին, 2-րդ և 3-րդ մասերում «պաբերության», «պաբերությունը», «պաբերությունից», «պաբերություններով» բառերն անհրաժեշտ է փոխարինել համապատասխանաբար «մասի», «մասը», «մասից», «մասերով» բառերով: Նախագծի 2-րդ հոդվածի 1-ին մասում «ենթակետում» բառն անհրաժեշտ է փոխարինել «պարբերությունում» բառով: 2. 6-րդ հոդվածի 2-րդ մասն անհրաժեշտ է հանել, քանի որ այն կրկնում է 1-ին մասի դրույթը: 3. Նախագծի բոլոր մասերից «ինքնակաշուն» բառը հանել: 4. Նախագծի 1-ին հոդվածի 1-ին մասում տուգանքի չափը սահմանել նվազագույն աշխատավարձի հնգապատիկի	1. Ընդունվել է: 2. Ընդունվել է: 3. Ընդունվել է: 4. Ընդունվել է:	1. Կատարվել համապատասխան փոփոխություն է 2. Կատարվել համապատասխան փոփոխություն է 3. Կատարվել համապատասխան փոփոխություն է 4. Կատարվել համապատասխան փոփոխություն է

		չափով: 5. Նախագծի 1-ին հոդվածի 2-րդ մասով լրացվող նոր 16-րդ մասը հանել, իսկ 2-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ պարբերությամբ վրա հասնող պատասխանատվությունը կապել տարեկան պետական տուրքը վճարելու հետ:	5. Ընդունվել է:	5. Կատարվել է համապատասխան փոփոխություն
5.		«Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» և «Եկամտային հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքների նախագծերի 1-ին հոդվածներում «մասով» բառն անհրաժեշտ է փոխարինել «կետով» բառով:	Ընդունվել է	Կատարվել է համապատասխան փոփոխություն

6.		«Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծով առաջարկվող լրացումը կատարել «Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 7-րդ հոդվածում:	Ընդունվել է	Կատարվել է համապատասխան փոփոխություն
7.		«Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքում փոփոխություն և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի 1. 2-րդ հոդվածը խմբագրել՝ քաղաքացիների իրավունքները լիցենզավորման գործընթացում փաստաթղթերի ներկայացման տարբերակների ընտրության հարցում (առձեռն կամ փոստով կամ էլեկտրոնային համակարգի միջոցով) չսահմանափակելու նպատակով:	1.Ընդունվել է:	1.«Լիցենզավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի 2-րդ հոդվածը շարադրվել է նոր խմբագրությամբ՝ հետևյալ բովանդակությամբ. «1.1. Լիցենզիավորման գործընթացում փաստաթղթերի ներկայացումը և ստացումը Երևան քաղաքից դուրս կարող է իրականացվել է մեկ պատուհանի սկզբունքով, որի կարգը հաստատում է

		2. 3-րդ հոդվածում նշված ցանկի 4-րդ կետում «կազմակերպում» բառը փոխարինել «իրականացում» բառով, քանի որ տվյալ պարագայում ֆիզիկական անձը հանդես է գալիս որպես ծառայություններ իրականացնող:	2. Ընդունվել է:	Հայաստանի Հանրապետության կառավարությունը:»: 2. Կատարվել է համապատասխան փոփոխություն
8.		«Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման մասին» ՀՀ օրենքում լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի 1-ին հոդվածում անհրաժեշտ է հստակեցնել թե որ «ուղևորափոխադրումներ իրականացնող» բառերից հետո պետք է կատարվի լրացումը:	Ընդունվել է:	Նախագծի 1-ին հոդվածը շարադրվել է նոր խմբագրությամբ. «Հոդված 1. «Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման մասին» Հայաստանի Հանրապետության 2005 թվականի հուլիսի 8-ի ՀՕ-166-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 15-րդ հոդվածի 3-րդ մասի «ա» և «գ» կետերում «մեկ մարդատար տաքսի-ավտոմոբիլով

				ուղևորափոխադրումներ իրականացնող» բառերից հետո լրացնել «Ֆիզիկական անձանց և» բառերը»
9.	ՀՀ Ազգային ժողովի տնտեսական հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ Վ. Այվազյան	Առաջարկում ենք «Ավտոմոբիլային տրանսպորտի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծից հանել զբաղված լինելը (չլինելը) արտահայտող լուսացուցիչներին և թափքի կողային մասում շախմատածև տարբերանշմամբ գծանշումին վերաբերող տաքսամոտորային փոխադրումներն իրականացնողների ավտոտրանսպորտային միջոցների կահավորանքին ներկայացվող պահանջները:	Ընդունվել է:	«Ավտոմոբիլային տրանսպորտի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի 2-րդ հոդվածի 2- րդ մասից հանվել են «զբաղված լինելը (չլինելը) արտահայտող լուսացուցիչներով» բառերը, ինչպես նաև «Տաքսամոտորային փոխադրումներն իրականացնողների ավտոտրանսպորտային միջոցները թափքի կողային

				մասուն պետք է ունենան շախմատածև տարբերանշամբ գծանշում» նախադասությունը: «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում և փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի 2-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին պարբերությունը շարադրվել է հետևյալ խմբագրությամբ. «Առանց տարբերանշանների (տանիքին՝ «ՏԱՔՍԻ» գրառմամբ կամ շախմատածև դեղին և սև գույնի տարբերանշանի կամ տաքսի-ծառայություն
--	--	--	--	---

				մատուցող կազմակերպության և տվյալ տրանսպորտային միջոցի վարորդի կամ անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձի մասին տեղեկատվության), գնացուցակի մարդատար տաքսի ավտոմոբիլով փոխադրումներ իրականացնելը՝ առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի տասնապատիկի չափով:»
--	--	--	--	---